«Գոլոս Արմենիի», 14 մարտի 2007

«ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ» հրատարակվել է «Pro Patria» մատենաշարի երկրորդ ժողովածուն

«ԳԱ»-ի հարցերին պատասխանում է քաղաքական գիտությունների դոկտոր Արմեն ԱՅՎԱԶՅԱՆԸ

- Պարոն Այվազյան, եթե չեմ սխալվում, անցյալ տարվա փետրվարին, Ռամբույեում Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների հանդիպումից երկու օր առաջ հրատարակվեց «Pro Patria» («Հայրենատիրություն») մատենաշարի առաջին հատորը՝ «Հայաստանի ազատագրված տարածքը եւ Արցախի հիմնահարցը»: Իսկ օրերս Երեւանում տեղի ունեցավ նույն մատենաշարով լույս ընծայված «Ռազմավարության եւ անվտանգության հարցեր» նոր ժողովածուի շնորհանդեսը: Ինչո՞վ են պայմանավորված դրա ստեղծման գաղափարն ու անհրաժեշտությունը:

- Ակնհայտ է, որ հայկական քաղաքակրթության գոյատեւումն ու զարգացումը, դեռեւս տեւականորեն երաշխավորված չեն: Հայ ժողովուրդն իր հայրենիքում անկախ, ազատ եւ անվտանգ ապրելու պայմաններ ու երաշխիքներ դեռեւս չի ստեղծել: Իսկ Խորհրդային կայսրության փլուզումից հետո Հայաստանը (ռազմավարական առումով ՀՀ-ն եւ ԼՂՀ-ն անհրաժեշտ է դիտել որպես մեկ միավոր) շարունակում է մնալ սահմանային իրավիճակում՝ «լինե՞լ, թե չլինե՞լ», դեմ առ դեմ՝ ներքին ու արտաքին մի շարք մահացու սպառնալիքների, որոնցից ամենագլխավորն Ադրբեջանի հերթական ագրեսիայի հնարավորությունն է: Ուստի մեր պետականության կառուցման ընթացքում առավել քան կարեւոր է ռազմավարական միտքը եւ այն դերակատարությունը, որին նա կոչված է: Ցավոք, ազգային անվտանգությունը եւ ռազմավարությունը հայության քաղաքական գիտակցության թույլ զարգացած բաղադրիչներն են: Չվերլուծելով այդ իրավիճակի պատմական պատճառները, նշեմ, որ այսօր հայության ճնշող մասը, այդ թվում՝ նրա «վերնախավը», դեռեւս Հայաստանի եւ հայ ժողովրդի անվտանգության ապահովումն իր պատասխանատվությունից դուրս է դասում՝ համարելով այն անլուծելի խնդիր: Նման վտանգավոր դիրքորոշումը վերջին հարյուրամյակների ընթացքում արդեն քանիցս հանգեցրել է համազ-

գային աղետների: Հայ քաղաքական գիտակցության եւ ազգային անվտանգության համատեղելիությունը, առավել եւս դրանց միաձուլումը, անհետաձգելի խնդիր է, որը պետք է լուծել ինստիտուցիոնալ, տեղեկատվական, գաղափարահոգեբանական եւ գիտական ոլորտներում: Դրանց համատեքստում «Pro Patria» մատենաշարի երկրորդ հատորը պատասխանում է Հայաստանի անվտանգության խնդիրների ու մարտահրավերների լայն սպեկտրին վերաբերող մի շարք կարեւորագույն հարցերի:

- Ներկայացրեք այդ հարցերից մի քանիսը:

- «Ռազմավարության եւ անվտանգության հարցեր» ժողովածուն ունի 7 բաժին: Առաջին բաժնում («Հայաստան եւ տարածաշրջան») ուսումնասիրվում են Հայաստանի եւ նրա հնարավոր հակառակորդների՝ Ադրբեջանի ու Թուրքիայի զինուժերը եւ ռազմական դոկտրինները: Երկրորդում («Հայաստանի ազատագրված տարածքը՝ անվտանգության երաշխիք») հիմնավորվում է ազատագրված տարածքի կենսական նշանակությունը՝ Հայաստանի անվտանգության համար: Երրորդ բաժինը («Տեղեկատվական անվտանգություն») նվիրված է Հայաստանի տեղեկատվական անվտանգության անհետաձգելի խնդիրների վերլուծությանը, մասնավորապես ինտերնետում հայերենի ներկայության խնդիրներին եւ հայկական շահերի ներկայացմանը: Ապա հետեւում է «Հասարակություն եւ պետություն» բաժինը, որտեղ ուսումնասիրվում է հայ-թուրքական հարաբերություններում էթնիկ հոգեբանության կարեւոր նշանակությունը, ինչպեսեւ քննարկվում է հայ հասարակության եւ բանակի փոխհարաբերությունը: Հինգերորդ բաժինը («Ռազմավարություն. դասական եւ ժամանակակից տեսություններ») մանրամասնորեն ներկայացնում է Արեւմուտքի ժամանակակից ռազմավարական տեսությունները, ինչպեսեւ հնագույն ռազմարվեստի չինացի տեսաբան Սուն Ցզիի (մ. թ. ա. 5-րդ դար) անմահ գրքի հայերեն թարգմանությունը: Վեցերորդ բաժինը («Ռազմական պատմություն») նվիրված է Հայաստանի ռազմական պատմության որոշ արդիական դրվագների վերլուծությանը (1920 թ. Կարսի անկման իրական պատճառները, Արցախյան պատերազմի առաջին փուլը, լեռնային եւ լեռնաանտառային մարտավարության զարգացումը 20-րդ դարում, ինչպեսեւ Հայաստանի ու Պարթենոնի դեմ Հին Հռոմի գաղտնի գործողություններն ու քայքայիչ գործունեությունը): Եվ, վերջապես, վերջին բաժինը կազմված է արցախյան խնդրին եւ թուրքական գաղտնի ծառայություններին նվիրված գրքերի գրախոսականներից: Ընդ

որում, ներկայացված նյութերի մի մասն ընտրվել է դրանց արտակարգ արդիական լինելու չափանիշով, իսկ մյուս մասը տեսականորեն արժեքավոր է:

- Իսկ ի՞նչ սկզբունքներով եք առաջնորդվել նյութերի ընտրության եւ խմբագրման հարցում:

- Հիմնարար սկզբունքը ռազմավարական ամենասովորական ճշմարտությունն է, որը կարելի է ձեւակերպել հետեւյալ կերպ՝ սպառնալիքների եւ ազգային անվտանգության պահանջների ճշգրտում. դրանց չեզոքացման կամ նվազեցման միջոցների ընտրությունը չի կարելի վստահել որեւէ երրորդ կողմի՝ լինի դա պետություն, ռազմաքաղաքական բլոկ, թե արտասահմանյան փորձագետների խումբ: Այդ աշխատանքը պետք է իրականացվի բացառապես սեփական մտավոր ուժերով, որքան էլ դրանք ներկա պահին սահմանափակ լինեն: Այլապես մեզ կհրամցնեն Հայաստանի շուրջը տիրող աշխարհաքաղաքական իրավիճակի աղավաղված պատկեր, երկրի ներսում սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման փակուղային լուծումներ եւ ուրիշի ռազմավարական նպատակներին ու շահերին հարմարեցված ծրագրեր: Դրա հետեւանքով կարող ենք դարձյալ ազգովին հայտնվել կոտրած տաշտակի առջեւ՝ այս անգամ արդեն ընդմիշտ:

- Ի՞նչ հեղինակների գործեր են ընդգրկվել ժողովածուի մեջ:

- Ժողովածուի հեղինակներից են գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադեւոսյանը՝ առասպելական Կոմանդոսը, որն իր անձնական արխիվի հիման վրա վերլուծել է Արցախում ռազմական գործողությունների նախնական փուլը եւ հայկական բանակի կայացման գործընթացը, ճանաչված հրապարակախոս եւ հասարակական գործիչ Զորի Բալայանը, ազգային անվտանգության հարցերի փորձագետ Հրաչյա Արզումանյանը, պատմաբան եւ հրապարակախոս Գեւորգ Յազըճյանը, վերլուծաբաններ Շուշան Խաթլամաջյանը, Սուրեն Մարտիկյանը, տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետ Կարեն Վրթանեսյանը, Սամվել Մարտիրոսյանը, Ռուբեն Թառումյանը եւ այլք:

- Ինչ եք կարծում՝ Հայաստանի իշխանություններն ի՞նչ արձագանք կտան ռազմավարական եւ ազգային անվտանգության հարցեր շոշափող «Pro

Patria»-ի երկրորդ հատորի հրատարակմանը: Եվ արդյո՞ք սպասում եք որեւէ գործնական արձագանքի:

- Թեպետ առաջին ժողովածուի տպագրությունից հետո որեւէ արձագանք չի եղել, բայց ինձ հայտնի է, որ այն ուշադրությամբ կարդացել են ե՛ւ պետական կառույցների ներկայացուցիչները, ե՛ւ փորձագետները: Բացի այդ՝ հայրենական որոշ բուհերում այն գործածում են որպես դասագիրք: Հուսով եմ, որ նոր ժողովածուի բովանդակությունը օգտակար կլինի ինչպես նրանց, ովքեր հայոց պետության ղեկին են ու որոշումներ են կայացնում, այնպես էլ լայն հասարկայնությանը: Այժմ, առավել քան երբեւէ, Հայաստանի շուրջը եւ ներսում տիրող իրավիճակը պահանջում է խոր եւ անընդհատ վերլուծություն, եւ չեմ երկնչի ասել, որ այդ հարցում պետք է ապավինել միայն սեփական ուժերին:

- Շարունակություն կլինի՞, թե՞ կսահմանափակվեք երկրորդ ժողովածուով:

- Հուսով եմ, որ կլինի... Անցյալ տարի համախոհներով ստեղծեցինք «Արարատ» ռազմավարագիտական կենտրոնը, որը զբաղվում է ռազմավարական խնդիրների ուսումնասիրությամբ. դրանք միջազգային հարաբերություններն են՝ կապակցված Հայաստանի հետ, ինչպես նաեւ մեր երկրում տեղի ունեցող հասարակական-քաղաքական ներքին գործընթացները: «Pro Patria» մատենաշարի նոր ժողովածուների հետագա հրատարակումը ուղղակիորեն կախված է մասնավոր անձանց ֆինանսավորման չափից: Փաստորեն այս տարվա մեջ սա «Արարատ» կենտրոնի պատրաստած երկրորդ հրատարակությունն է: Առաջինը լույս ընծայվեց «Հայկական ինքնության հիմնաքարերը. բանակ, լեզու, պետություն» մենագրությունը: Իհարկե, մենք կշարունակենք աշխատանքը: Ծրագրերը շատ-շատ են...

Զրուցեց Զառա ԳԵՎՈՐԳՅԱՆԸ